վոմն մինչև ի դուրս եկեղեցոյն պարփակեալ, և լուռ լեալ կային ամենեքեան (Ռեբէ)։

Կիրակի (21 Դեկտ.). գնացաք ի յԱստուածածին և Հոգևորտէրն դաս ասաց և պատմեաց զեղեալ իրս Մուղնեցոյն և կրկին նզովեաց համախոհիւք և մեզագիր եղև կաթողիկոսին թէ Այն հերձուածող Մուղնեցոյն Աչաց լոյս է գրեր, և զթուղթս չԱրգար Ոհանին որ վասն Աստուածատուր վարդապետին ինչ է գրեալ. և զՊարմախսուղն և զՎարդանն յանուանէ կապելով կապեաց և նզովեաց անիծիւք և բանադրանօք, Զի՝ ասէ՝ զսիւնհոդոսն իմ կամէին խափանել, Աստուած խափանեսցէ զնոսա հոգով և մարմնով, և որչափ ի մարմնի են՝ ի մէջ ալեաց փորձանաց կայցեն, և այլ բազում բանս այլոցն հաւասարաբար՝ չարեացն և համախոհից նոցա։ Եւ ասաց թէ Կ'առաքեմք թուղթ կաթողիկոսին մեք եւ ամենայն վարդապետք. թէ չարեացն ետ զպատիժն և բարեացն աւրհնութիւն և ևս քաղաքիս մխիթարական թուղթ և աւրհնէք՝ նա՛ բարի, իմ մեծ եղբայրն է և աչաց լոյս, և թէ կրկին յամառի և զչարսն իւր գովէ՝ նա՛ յայտնի ամենեցունցդ լինի որ այսուհետև զթեմքն զամենայն ի վերայ Սուրբ Երուսաղէմի աթոռոյն կու կապեմք, որ անտի առնեն զսուրբ մեռոնն։ Եւ այլ բազում ծանուցում արար զչարութիւնս նոցա ժողովրդեանն բազմաց։ Եւ յետ պատարագին Խաչատուր վարդապետն կրկին ծանոյց զբան Հոգևորտիրին թէ Վարդանն որ կ'ասէք՝ նա այն չուն Տարաբխանաճին է, և զԱստուածատուրն որ հարցանէք՝ նա Պարմախսուղն է. և կրկին նա ի դաս քաշեց զնոսա և զչարսն Սուրբ Սարգսի եկեղեցոյն, որ և ամենայն ժողովուրդքն ասէծք ասացին նոցա։ Եւ Ղազար վարդապետն ի Սուրբ Նիկողոս զՍուրբ Սարգսի չարքն ի դաս քաշեց և նզովեաց համախոհիւք նոցա։ Առաւօտուս զհացն ի Մի-